

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը
6 ռուբլի.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՕԳ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакция „Мшакъ“
Базарная ул. д. Тамашена № 16.
Կամ Тифлисъ, Редакция „Мсшакъ“.
Տ Է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Պարագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզով
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկի
Տ Է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Հ Ռ Մ Ե Ա Դ Ի Բ Գ Ի Դ Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)

Պ Ե Ա Ռ Ի Կ Բ Ա Տ Ա Ն Ո Ր Դ Գ Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հասցէն՝

ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“.
Тифлисъ, Редакция „МСЧАКЪ“.

Ռ Ժ Ի Շ Կ

Վ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆԸ

մեկնեց Եստիստուկի:

Թ Ի Յ Լ Ի Մ Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ր Ա Ն

Չորեքշաբթի, յունիսի 18-ին
6-րդ միջև 9 ժամը Երեկոյեան
Փողովարանի ամբարշիտ Շիմոնովսկի մէջ
պ. պ. անդամները և կանգնադատները երե-
կոցներին համար մանկական խողով ուսուց-
չուհի Վ. Ն. Մաղաքեանի դեկլարաւոր-
ութեամբ Երեւանի օրհեստը:
1—1

ՅՈՒՇԱՐԱՐԻ

բովանդակութիւնը 4-րդ երեսում:
1—1

ՀՈՂԻՑ ԲԱՐՁՐ

Մանկեան զեղեցիկ և հրապուրելի չէ
հայ գիւղերի արտաքինը.
Ստորերկրայ բնակարանները, որոնց
մէջ ապրում է հայ ազգայնականութեան
մեծագոյն մասը, չափազանց աննպաստ
ապակողութիւն են թողնում դիտողի
վրայ: Նրանք յիշեցնում են ստոր կու-
տուրայի պատկերներ, որոնք յատուկ
էն են նախնական դարերին կամ անըս-
տաբարկ ընդերքի:

Մեր գիւղացիները հակված են
փաստարանի իրանց աների դրական
կողմը և ապացուցել ստորերկրայ
բնակարանների նպատակաւորմանը
թիւնները մեր երկրի առանձնայատ-
կութիւններով, ձմեռայն ցրտերի և
քամիների խտաղին արտապատ-
կութիւններով, տնտեսութեան, օրինակ
անասնապահութեան պահանջներով և
այլն:

Բայց այդ փաստարանութիւնները
և բացատրութիւնները որքան էլ պատ-
ճառարանված լինեն, այնուամենայնիւ
նրանք բոլորովին երկրորդական պէտք
է ճանաչվել այն հիմնական և անկրկ-
բայելի պահանջի առջև, որ առում է,
թէ տունը պէտք է հողից բարձր լինի
և որոշ յատակագծով շինված:

Հայերի բնակավայրերը մի այն-
պիսի բացատրութիւն չեն կազմում երկ-
րագիւղի վրայ, որ նրանք գիւղական
տները վերաբերութեամբ ստիպված
լինէին ստեղծել մի բոլորովին նոր
տիպի կերտումները:

Եւ արդարեւ՝ նախ հայերի մի մասը
ապրում է ոչ ստորերկրայ բնակա-
րաններում և ամենին աւելի վատ
զրուցեան մէջ չէ գտնու իրան: Երկ-
րորդ նոյն երկրում իրեւ հարեան
ապրող ցեղական տարբեր—ուսները,
գերմանացիները, վրացիների մեծա-
գոյն մասը և ուրիշ ազգութիւնները,
ապրում են հողից բարձր բնակարան-
ներում: Եւ վերջապէս՝ եւրոպական
շատ երկրներում, որոնք ունեն նոյն-
պիսի աշխարհագրական և տեղագրա-
կան դիրքեր, ինչպէս մեր երկրը,
վաղուց մարդիկ հրաժարվել են ստոր-
երկրայ բնակարաններից և զուրս են
եղել լոյս աշխարհ:

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵԻ ՏԱՐ- ՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒՒԼԻ

Ստանական ՄԷԿ ռուբլի	
Ամերիկա տարեկան	6 ռուբլի
Եւրոպայ »	30 Ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է	
ուղարկել	40 կոպ.

Մեր գիւղացին էլ պէտք է նոյնը
անի, և որքան շուտ կանէ նա այդ,
այնքան աւելի լաւ իր համար և իր
կույտուրական պատի համար:

Գիւղական տան վերակազմութեան
հարցի վրայ չը պէտք է նայել իրեն
յուլ արտաքին մի պահանջի վրայ, որը
կրում է մոլայի բնակարանութիւն և որը
կարելի է արձանագրել:

Ոչ, նա արձանագրանքի չէ կարող
ենթակայ լինել:
Նա կույտուրական այնպիսի պա-
հանջներին է, որոնց վերաբերու-
թեամբ կարեւոր է յուրը ուշադրութիւն
և անհրաժեշտ են զործնական քայլեր
իրագործութեան եղանակների ծրա-
վիրներով:

Հայի կույտուրական անուան հա-
մար ամօթ է շարունակել սարկի
ստորերկրայ տներում, որոնց անկարգ
և անկանօն զտեղծված լինելով մի-
մեկնց կողքի յիշեցնում են աւելի
աւերակներ կոչուող, քան մարդկայն
կենդանապարտութեան համար նշանակ-
ված բնակարանները:

Մենք անցնայնքում առիթ ենք
ունենցիլ հրաւիրել մեր հասարակու-
թեան ուշադրութիւնը ներկայ հարցի
վրայ, և կենսիկ փաստերը ստիպում
են մեզ նորից գնել նրան հրապա-
րակի վրայ:

Ա. Գալանթաբ

ՎԵՐՋԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գետեբուրգ, 16 յունիսի (հերթական)
Նրեկոյանս նիստում, հակերթ վիճա-
րանութիւններից յետոյ, Գետական
Գուման մեծամասնութեամբ, ընդգէմ
օտարալ—գեմծկրանների, ընդունեց այն
օրինակով, որով իրաւունք է տրե-
վում ֆինանսների միւնիստրին 200 մի-
լիօնի ներքին փոխառութիւն կերել
պետական նախարարի ղեկից ստոր
ձածկելու համար:

Գուրոփին «Русск. Знамя» լրագրում
պահանջում է պատասխանատուութեան
ենթարկել Միլիկովին՝ իբր թէ նորին
Մեծութեանը վերաւորանք հասցնելու
համար: Հակառակ դէպքում՝ նա սպառ-
նում է. «Մենք ինքներս փականք կը
գնենք սինյորի բերնին»:

Հոգևորականութեան աչքի ընկնող
ներկայացուցիչները՝ իրանց անըսա-
կանութիւնն են յայտնել Անտոնի միտ-
րօպօլիտին Գետրոպուլօվսկի տաճարի
կողքին մասնադասանքի մէջ իր կա-
ռուցուող թոյլատրելու համար:

«Совѣзъ Женщинъ» թերթի խմբա-
գիրը անկեղծ է կազմակերպում պրո-
ֆէսորների մէջ՝ ազատ ունկնդրուհի-
նրի վերաբերմամբ ապացուցանելու մի-
նիստրական շքանշանականի անհիմն լի-
նըլը:

Պետական Գումայի կույտուրանում
վատ տպագրութիւն է թողել շքան-
ներից տարածված այն լուրը, որ ժո-
ղովրդական լուսաւորութեան մինիստր
Վլայպըր մնում է իր պաշտօնում:

Օպպօզիցիան և կենտրոնը անըն-
դունելի են համարում պատգամաւոր-
ներին՝ բաց թողնելով նրանցի հա-
մար՝ առեւտրի ենթարկելու իրա-
ւունքը վերապահելու կառավարութեանը:

Բերլին, 15 յունիսի
«Վ. Տ.» և «Ֆ. Տ.» լրագրներում
տպված է Վ. Չուլից «Վ. Տ.»-ի ստա-

ցած հետագիրն այն մասին, որ կա-
ռավարութիւնը ամեն ջանք գործ է
դնում, որպէսզի Բ. Գրնից առանձին
արտօնութիւններ ստանայ Մակիգո-
նիայում, նպատակ ունենալով արտօ-
նեալ տնտեսական գրութիւն գրաւել
Սալօնիկի և Կոսովի վիլայէթներում:

Ռաշտ, 15 յունիսի
Էնդէի եկաւ «Վրասնօլօղակ» պատե-
րագրական շոգնեալը:

Յունիսի 14-ին անջնումանի փակելու
ժամանակ հրացանաձգութիւն սկսվեց
կողակների և ազգաբնակչութեան միջև:
Երկու կողմից էլ վիրաւորներ կան:
(«Վ. Գ.»)

Քարեղ, 15 յունիսի
Գնեւրայ—հիւպատոսարանում բաստ
նատեցին տեղական անջնումանի նախա-
գահը և նրա անդամներից մէկը: Բա-
ցի գրանից գնեւրայ—հիւպատոսի մօտ
եկան թշնամի թաղերի ներկայացու-
ցիչները և խնդրեցին նախաձեռնու-
թիւն վերցնել հարաւորութիւն կապել
տալու: Եկանների թուում էր նաև
յայտնի աղիտուտը շէլի Մալիում: Գն-
եւրայ—հիւպատոսի առաջարկութեամբ
երկու կողմերն էլ հրացանաձգութիւնը
զաղարեցրին:
(«Վ. Գ.»)

Քարեղ, 16 յունիսի
Գնեւրայ—հիւպատոս քարտուղարի,
թարգմանի և երեսուն կողակների ու-
ղեկցութեամբ անցաւ քաղաքի այն
թիւղերով, ուր տեղի է ունենում հրա-
ցանաձգութիւն: Այդ շքազայութիւնը
զգաստացուցիչ տպաւորութիւն գոր-
ծեց:

Եյսօր հրացանաձգութիւն չը կայ:
Թշնամի թաղերի ներկայացուցիչները,
Ժողովուրդի հիւպատոսարանի շինու-
թեան մէջ, միջոցներ են մշակում քա-
ղաքում հանգստութիւն մտցնելու:
Ուրմիայից ստացված տեղեկութիւն-
ների համաձայն, թէ այնտեղ և թէ
նրա շրջակայքում հանգստութիւն է
տիրում:
(«Վ. Գ.»)

Բօսնի, 16 յունիսի
Կարկուտը ոչնչացրեց 7000 դես. հա-
ցահատիկ, ծխախոտ և բանջարանոց:
Վնասները հասնում են կէս միլիօնի:
(«Վ. Գ.»)

Կիլովօզսկ, 16 յունիսի
Կարկուտը ոչնչացրեց 3000 դեսեա-
տին գարնանացանն ու աշնանացանը
և բանջարանոցները: Վնասները վերին
ատտիճանի խոցը են:
(«Վ. Գ.»)

Կեռնօ, 16 յունիսի
Բէյութին նիւ-ծօրկից հազարում
են, որ Մեկելիայի կառավարութիւնը
փութկոտութեամբ գործը է ուղար-
կում այն բոլոր տեղերը, ուր կարգ
ու կանօն խախտված է: Եկտը ճանա-
պարտորեց պատմում են, որ Տօրլօ
տանող ճանապարհներին բոլոր կառու-
ցիչները քանդված են, բացի մեկակական
կենտրոնական ճանապարհից: Տօրլօ
ենում, որովհետև երկրը կայ յեղափո-
խականների յարձակման, պարտաստ
կանգնած են 2500 զինուոր: («Վ. Գ.»)

Գարեղ, 16 յունիսի
Ներկայումս Վիլնիւմ կայսրի և թիւր-
քաց սուլթանի միջև նամակներով
մտքերի փոխանակութիւն է կատար-
վում: Այդ «անձնական» թղթակցու-
թիւնների բովանդակութիւնը, ի հա-
կէ, ոչ օրի յայտնի չէ: Բերլինի պա-
լատական շքանշաններում վճարված քան
են համարում վերմանական կայսրի
այցելութիւնը Պօլիս սեպտեմբր ամ-
սան: Իրականութեամբ շքանշաններում
խօսում են, որ անհրաժեշտ է համար-
վում եռապետական դաշնակցութեան
մէջ մտցնել նաև Թիւրքիային:

Գաղափարների պայտոր 489
ձայնով ընդգէմ 62 ի ընդունեց այն
400 հարց ֆրանկը, որ յատկացվում
է Փալէէրի ճանապարհորդութեան դէ-
պի ճիւղին: Սօցիալիստ Վալիանը ա-

ռաջարկեց այդ գումարը դարձնել 50
հարգար, նպատակ ունենալով խանգա-
րել նախագահի այցելութիւնը Ռու-
սաստան, բայց Պիշոնի ճառից յետոյ,
որով շնչտեց այն հանդամները, որ
Ռուսաստանի հետ համաձայնութիւն
կապելը ֆրանսիական արտաքին քա-
ղաքականութեան հիւրը կը մնայ, ոչ
օրի սպանալիք չը կարգելով, պայա-
տը՝ ծափահարելով Պիշոնին՝ մերժեց
Վալիանի առաջարկութիւնը:
(«Վ. Գ.»)

Բարեգէօսա, 15 յունիսի
Յունիսի 14-ի երկկոյեան Բամբա-
Փլօքէս փողոցում վերստին տեղի ու-
նեցաւ ռուսի պայթում: Վիրաւորված
են երկու հողի, որոնցից մէկը ռուսի-
կանական պաշտօնեայ է և որը շու-
տով մեռաւ: Ժողովրդած ամբոխը դի-
մեց փախուստի: Ոստիկանութիւնը մի-
քանի ձերբակալութիւններ կատարեց:
(«Վ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,
ԿԱՅՈՂԻԿՈՍՏԱԿԱՆ ՊՏՏՈՒՄԻՆԻՍՏԻ
ՈՐՈՇՐԴՆԻՅՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Յունիսի 13-ին Թիֆլիսի քօրսալի դա-
ւիճում, երեկոյեան ժամը 8-ին, տեղի ու-
նեցաւ կաթողիկոսական ընտրութեան խոր-
հրդակցական ժողովը շաբաթը Գ. Ա. Ն. Ն.
կազմող վերջին նիստը Ս. Յարութիւնեանի
նախագահութեամբ, մասնակցութեամբ 25
պատուիրակներ և քաղաքի կողմնակի
անձանց:

Նախագահը, նիստը բացված յայտարա-
րելով, կարգեց ժողովի համար մշակված
հետևեալ օրակարգը: 1) լրացուցիչ տեղե-
կութիւններ: Կը կարգացվի մի նամակ: 2)
սեպտեմբերի համագումար հրաւիրելու
հարցը: 3) տեղեկութիւններ հաւաքելու
գործը շարունակելու խնդիրը և 4) գրաւոր
ածիփոխեալ եղած նիստերի:

2. Առաւելեան, իբր լրացուցիչ տեղեկու-
թիւն, կարգում է Տաղաւարեանի նամակը,
որտեղ նա իր կարծիքն է յայտնում թիւր-
քահայ ընտրելիների մասին և ըստ արժա-
նարանութեան նրանց շատաւորում է այս
կարգով: Իգիբրեան, Դուրեան և ապա Օր-
մանեան:

Դրանց յետոյ առաջարկվում է ժողովա-
կաններին, որպէսզի ոչ որեւէ նոր տեղե-
կութիւն ունի տալու յիշեալ թեկնածու-
ների կամ նորերի մասին՝ հաղորդել:

Ոչ ոք ցանկութիւն չէ յայտնում: Նա-
խագահը, ամփոփ ու համաձայն կերպով զե-
կեցարանով թէ ինչ է արել մինչև այժմ
խորհրդակցութիւնը, յայտնում է, որ յան-
ձնաժողովը իր վերջին նիստում, ի նկատի
առնելով հաւաքված տեղեկութիւնների ան-
բասարք լինելու և այն, որ ընտրութիւն-
ները լինելու են հոկտեմբերի 30-ին, գտել
է, որ վաղաժամ է թեկնածուների այս
կամ այն ցանկի վրայ կանգ առնել և որո-
շել է յետաձգել այդ խնդիրը ու շարունա-
կել լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքել:

Անարեանը անիրագործելի է համարում
բոլոր թեկնի պատուիրակների համագու-
մարը, սեպտեմբերին աշխատանքների ըս-
կարգված լինելու պատճառով, ուստի առա-
ջարկում է հրաւիրել միայն Թիֆլիսի թեկնի
պատուիրակների համագումար նախ քան
պատգամաւոր ընտրութիւնը:

Այդ երկու առաջարկների շուրջը սկսվում
են թեր և դէմ վիճարանութիւններ: Ա.
Անարեանս, 2. Առաքելեան և այլք աւե-
ւարը են համարում սեպտեմբերի համագու-
մարը և առարկում են, որ այս խորհրդակ-
ցութիւնները պէտք է որոշ եզրակացու-
թեան յանգնեալ կաթողիկոսական թեկնա-
ծուների նկատմամբ, որովհետև գաւառների
համար յանձնաժողովը այդ տեսակէտից
միայն արժէք կունենար:

Յանձնաժողովի անդամներ Արասխանեան,
Լէօ և Արծրունի պաշտպանում են յան-
ձնաժողովի առաջարկները, պատճառաբանե-
լով որ ժողովի ներկայ կազմը փոքրա-
մասնութիւն է կազմում, ուստի ցանկի
բուցարկումը ոչ մի նշանակութիւն չունի,
իսկ վերջական որոշման յանգել իրա-
տեց գործ է:

Չուկեան.—Յանձնաժողովի տուած տե-
ղեկութիւնները լրիւ չեն, ուստի եթէ հար-

ցը թուէարկվի, եւ ձեռնագրն կը մնամ. աւելի
լաւ է յետաձգել:
Նախագահ.—Հարցը պարզված է: 1)
ցանկալի է Թիֆլիսի թեկնի պատուիրակնե-
րի խորհրդակցութեան հրաւիրել պատգա-
մաւոր ընտրելու համար, 2) ցանկալի է
որ Թիֆլիսում լինի պատգամաւորական
խորհրդակցութիւն:

Չուկեան.—Պէտք է հանգիստ թողնել
պատուիրակներին. նրանք գիտեն թէ երբ
պիտի գան ընտրեն պատգամաւոր: Ճան-
կալի է, որ յանձնաժողովը չը շփոթէր իր
պարտականութիւնները պատուիրակների
պարտականութիւնների հետ: Յանձնաժո-
ղովը վրա պարտականութիւններ են դըր-
ված. Լէօն կարգեց զեկեցում Իգիբրեանի
մասին, պէտք է զեկեցուցնել պատրաստել
միւսներին մասին ևս, տալով փաստացի,
լրիւ, անաչտ տեղեկութիւններ:

Չաւարեան.—Չիտը են այն նկատու-
թիւնները, որ յանձնաժողովի հաւաքած
տեղեկութիւնները լրիւ չեն և պէտք է
լրացնել: Բայց հիշաւ և առում և Անարեան-
եանը, որ անկարելի է սեպտեմբերին
ռուսահայ պատուիրակների համագումար
հրաւիրել: Մինչև այժմ մեր խորհրդակցու-
թիւնները մասնաւոր ընտրութիւն են
կրել. այդ բոլորը, ի հարկէ, հարկաւոր են,
բայց մենք մեզ համար պէտք է պարզեց
որոշ ուղղութիւններ, սկզբունքներ: Ես
քանիցս ասել եմ, այժմ էլ կը կզենեմ, որ
մենք ունենք մի շարք դասական, կույտուր-
ական և քաղաքական խնդիրներ,
իսկ ստաւ և քաղաքարութիւն ստանան
գեմծկրատական հիմնութիւններ:

Նախագահը, որ յանձնաժողովի հաւաքած
տեղեկութիւնները լրիւ չեն և պէտք է
լրացնել: Բայց հիշաւ և առում և Անարեան-
եանը, որ անկարելի է սեպտեմբերին
ռուսահայ պատուիրակների համագումար
հրաւիրել: Մինչև այժմ մեր խորհրդակցու-
թիւնները մասնաւոր ընտրութիւն են
կրել. այդ բոլորը, ի հարկէ, հարկաւոր են,
բայց մենք մեզ համար պէտք է պարզեց
որոշ ուղղութիւններ, սկզբունքներ: Ես
քանիցս ասել եմ, այժմ էլ կը կզենեմ, որ
մենք ունենք մի շարք դասական, կույտուր-
ական և քաղաքական խնդիրներ,
իսկ ստաւ և քաղաքարութիւն ստանան
գեմծկրատական հիմնութիւններ:

Անարեանը յայտնում է, որ ինքը դէմ է
յանձնաժողովի աշխատանքները շարունակ-
կելուն, որովհետև նրանք անօգուտ են:
Մինչև այժմ արված տեղեկութիւնները
անեական են և նամակները՝ անարժէք: Իսկ
զարեց աւելին ապա նա չէր կարող Միւ-
տին որ ճիշտը կանս՝ անկարելի է Թիւրք-

